ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«29» ապրիլի 2015թ

ՀՐԱՄԱՆ

№ 95

ՊԵՏԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ ՄԱՏՉԵԼԻ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐՈՎ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՎԱԿՆՈՐԴ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԸՆՏՐՎԱԾ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՕՐԸ, ՎԱՅՐԸ, ԵՎ ԺԱՄԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի օգոստոսի 7-ի N 821-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 20-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի փետրվարի 5-ի N 216-Ն որոշման 1-ին կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1294-Ն որոշմամբ հաստատված հավելված 1-ի 14-րդ կետի 4-րդ ենթակետը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Սահմանել, որ պետական ոլորտի ծառայողներին մատչելի բնակարաններով ապահովման ծրագրի երկրորդ փուլի շրջանակներում հավակնորդ ծառայողների կողմից ընտրված բնակարանների վիճակահանությունն իրականացվելու է Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության աշխատակազմի գտնվելու վայրում՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3, 4-րդ հարկ հասցեում, 2015 թվականի ապրիլի 30-ին, ժամը 09:00-ին:
2. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Հասմիկ Պետրոսյանին՝ ապահովել հրամանի հրապարակումը Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության պաշտոնական կայք էջում:
3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում 2015 թվականի ապրիլի 29-ից:

ՆԱԽԱՐԱՐ՝ ԱՐԱՅԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

«29» «ապրիլ» 2015 թ
ք. Երևան